ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1

ք. Երևան «14» հոկտեմբերի 2020թ.

ՀՀ Հատուկ քննչական ծառայությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող Վ.Հակոբյանի, որը գործում է ՀՀ հատուկ քննչական ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 137 634 (վեց միլիոն հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է՝ մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 4 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի կողմից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (շահույթներ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Հատուկ քննչական ծառայություն	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա	ք. Երևան Սարկավագի 157
Ֆին. նախ. գործառնական վարչություն	"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/Հ 900011474286	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 02589128	ՀՎՀՀ 00803554
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն
պարտականությունների կատարող	Ա. Ազատյան
Վ.Հակոբյան	
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«14» հոկտեմբերի 2020թ.
ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	18441100/5	գլխարկներ	Ձմեռային գլխարկ՝ (բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար) մոխրագույն կարակուլե մորթուց, թասակը չորս պատանի գլխարկ (N 3 ձև, նկար 1), որի ճակատային մասի կենտրոնում ամրացված է ՀՀ ոսկեգույն զինանշան: Ամբողջությամբ պողպատագույն է, կարակուլե մորթուց, թասակը չորս պատանի: Գլխարկի ճակատային մասի կենտրոնում ամրացված է ՀՔԾ խորհրդանիշ-գլխարկանշանը:	հատ	60000	180000	3	Վ.Վաղարշյան 13ա	3	Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը
2	18441100/6	գլխարկներ	Գլխարկ՝ հովարով Արդարադատության երկրորդ և երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գլխարկի (N 3 ձև, նկար 3) հովարից վերև՝ գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՔԾ գլխարկանշան (N 3 ձև, նկար 6), իսկ գլխարկագագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում՝ Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը: Կիսաբրդյա 317գր/մ² 67% բուրդ, 33% Պ/Ե կտորից, գլխարկաբոլորքը՝ 342 գր/մ², մահուդե (գույն)կտոր, կարմիր եզրաշերտով: Եզրաշերտ հյուսված կապը(քուղը) 2 կոճակներով ամրացվում է գլխարկաբոլորքի վրա:	հատ	48000	144000	3	Վ.Վաղարշյան 13ա	3	
3	18441100/7	գլխարկներ	Գլխարկ՝ հովարով (երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի համար) Կիսաբրդյա կտորից, մահուդե գլխարկաբոլորքով, կարմիր եզրաշերտով: Եզրաշերտ հյուսված կապը (քուղը) 2 կոճակներով ամրացվում է գլխարկաբոլորքի վրա: Գլխարկաբոլորքի առջևի կենտրո-	հատ	7998	303924	38	Վ.Վաղարշյան 13ա	38	

			նական մասում ամրացվում է ՀՔԾ գլխարկանշան (N 3 ձև, նկար 11): Հովհարը սև է, լաքապատ (N 3 ձև, նկար 4): Գլխարկը մոխրագույն կտորից (67% բուրդ, 33% պ/ե, 317 գր/մ² խտություն, արտիկուլ 2311), 342 գ/մ² խտությամբ մահուդե կտորից: Գլխարկագագաթի եզրագծով և գլխարկաբոլորքի վերին եզրով անցնում է 2 մմ լայնքով կարմիր եզրաշերտ:							
4	18441100/9	գլխարկներ	Գլխարկ՝ (պիլոտկա)՝ մոխրագույն կիսաբրդյա կտորից, վերծալված եզրակարերն ավարտվում են կարմիր եզրակարով: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՔԾ գլխարկանշան (N 3 ձև, նկար 5): 1) գլխարկ՝ կանացի (պիլոտկա)՝ մուգ կապույտ կիսաբրդյա (արտ. 2311, 317գ/մ² խտությամբ 67% բուրդ, 33% պ/Է) կտորից: Կազմված է երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և 2 փեշիկից: Վերծալված եզրակարերն ավարտվում են կարմիր մահուդե եզրակով (կանտով): Ձախ կողմում ունի 3 օդանցք: Առջևի կենտրոնական ճակատային մասում ամրացվում է մետաղից պատրաստված ոսկեգույն գլխարկանշան՝ ՀՔԾ խորհրդանիշ:	հատ	5298	5298	1	Վ.Վաղարշյան 13ա	1	
9	18231400/3	տաբատներ	Տաբատ ամենօրյա մոխրագույն 20% բուրդ, 80% Պ/Է, 203 գ/մ² խտությամբ կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, երկու կողային գրպաններով, հետնամասի վրա կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան է: Տաբատի կողային գրպաններից 6-7 սմ ներքև տեղադրվում են շղթայով կոճկվող 18-20 սմ լայնությամբ ներկարված գրպաններ: Գոտին երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (N 8 ձև, նկար 1, 2): Պատրաստվում է մոխրագույն 44% բուրդ, 54% պ/ե, 2% լայկրա բաղադրության, 240 գր/մ² խտությամբ RIBSTOP կտորից:	հատ	12000	480000	40	Վ.Վաղարշյան 13ա	40	
10	35811170/2	համազգեստ	Ամենօրյա համազգեստ՝ բաճկոն-տաբատ: Բաճկոնը՝ մոխրագույն 20% բուրդ, 80% Պ/Է, 203 գ/մ² խտությամբ կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը ծալովի, թևքերը թեզա-նիքներով, որոնք կոճկվում են երկու կոճակ օղակներով: Բաճկոնը գոտիով է, կողքերից էլաստիկ ժապավենով	լրակազմ	33996	1427832	42	Վ.Վաղարշյան 13ա	42	

			ձգված: Ուսադիրների շրջանում երկու փակ-օղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է (N 8 ձև, նկար 2): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ օձիքը ծալովի, որի ծայրին ոսկեգույն ասեղնագործություն է (N 3 ձև, նկար 10): Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանը (N 8 ձև, նկար 1): Տաբատը՝ մոխրագույն 20% բուրդ, 80% Պ/Է, 203 գ/մ² խտությամբ կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, երկու կողային գրպաններով, հետնամասի վրա կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան է: Տաբատի կողային գրպան-ներից 6-7 սմ ներքև տեղադրվում են շղթայով կոճկվող 18-20 սմ լայնությամբ ներկարված գրպաններ: Գոտին երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (N 8 ձև, նկար 1, 2): Պատրաստվում է մոխրագույն 44% բուրդ, 54% պ/ե, 2% լայկրա բաղադրության, 240 գր/մ² խտությամբ RIBSTOP կտորից:							
11	35811170/1	համազգեստ	Համազգեստ գարնանային-աշնանային բաճկոն տաբատ: Բաճկոնը՝ սև գույնի կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով: Բաճկոնին ամրացված է կարգավորվող գլխանոց: Բաճկոնի ձախ լանջափեշի վերին հատվածում կենտրոնական շղթային զուգահեռ 1.5 սմ հեռավորության վրա՝ 16 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպան է, լանջափեշերի երկու կողային հատվածում կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ պլաստմասե շղթայով փակվող գրպաններ են (22 սմ): Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Երկու թևքերին դեպի ներս ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ են: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է (N 11 ձև, նկար 2): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանը (N 11 ձև, նկար 1): Բաճկոնը 92%	լրակազմ	39996	1679832	42	Վ.Վաղարշյան 13ա	42	

			նայլոն, 8% լայկրա բաղադրությամբ,150 գ/մ² խտությամմբ կտորից: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական շղթայա-կան կոճկվածքով: Բաճկոնի հետնամասը վերին կտրվածքով, առաջամասը՝ վերին և փեշից 15սմ բարձրությամբ կտրվածքով: Բաճկոնին կարով ամրացված է գլխանոց (կապյուշոն), որի առջևի եզրաշերտով անցնում է էլաստիկ քուղ՝ պլաստմասե կարգավորիչ, քուղի ծայրերին պլաստմասե բռնակներ: Բաճկոնի ձախ լանջափեշի վերին հատվածում կենտրոնական շղթային զուգահեռ 1.5 սմ հեռավորության վրա տեղադրվում է 16սմ երկարությամբ շղթայով փակվող գրպան, իսկ լանջափեշերի երկու կողային հատվածում կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ տեղադրվում է 22սմ պլաստմասե շղթայով փակվող գրպաններ: Աստառը ցանցավոր 100% նայլոնե կտորից, որի աջ լանջափեշին զուգահեռ մշակվում է 18սմ պլաստմասե շղթայով փակվող ծոցագրպան: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով, լայնությունը կարգավորող 2.15x10 չափսի կպչունակով: Երկու թևքերին դեպի ներս ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ, ձախ թևքի ուսագլխից 90մմ ներքև կարվում է կպչանով ամրացող ՀՔԾ թևքանշան: Տաբատը՝ սև գույնի կտորից, ձևով նման է սույն հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ նկարագրված տաբատին (N 11 ձև, նկար 1, 2): Պատրաստվում է 92% նայլոն, 8% լայկրա բաղադրությամբ, 150 գր/մ² խտությամբ կտորից: Տաբատը ուղիղ ուրվագծով երկու կողային գրպաններով, հետնամասի վրա մշակված է կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան: Տաբատի կողային գրպաններից 6-7սմ ներքև տեղադրվում են շղթայով կոճկվող 18-20սմ լայմությամբ ներկարված գրպաններ: Գոտին երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը շղթայով փակվող, գոտին կոճկվում է օղակ-կոճակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ:						
12	18231200/2	կիսաշրջազգեստներ	Կիսաշրջազգեստ ամենօրյա՝ մոխրագույն կիսաբրդյա 20% բուրդ, 80% Պ/Է, 203գ/մ² խտությամբ կտորից է, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողմամ-	հատ	9000	18000	2	Վ.Վաղարշյան 13ա	2

			ձև, նկար 4, 5): կիսաշրջազգեստ՝ մուգ կապույտ կիսաբրդյա (արտ. 2311, 317գր/մ^2 խտությամբ 67% բուրդ, 33% գր/մ^2) կտորից կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:							
14	18341100/1	շապիկ	Շապիկ ամենօրյա բամբակյա՝ սև գույնի բամբակյա կտորից, ուղիղ ձևվածքով, կարճաթև (N 8 ձև, նկար 1, 2): Պատրաստվում է սև գույնի 100% բամբակ, 150 գր/մ^2 խտությամբ կտորից: Շապիկը արտադրվում է ուղիղ ձևածքով, կարչաթև, վզամասը մշակված է 2սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Թևքերի և փեշի եզրերը ներծալված և 2սմ լայնքով և եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով:	հատ	3498	293832	84	Վ.Վաղարշյան 13ա	84	
16	18211500/1	բաճկոն	Ձմեռային բաճկոն բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ սև գույնի կտորից, տաք ներդիրով, կոճկվում է կենտրոնական պլաստմասե շղթայով: Բաճկոնի օձիքը կանգուն, որի վրա տեղադրվում է մոխրագույն կարակուլե օձիք: Առաջամասը և թիկունքը վերին կտրվածքով, լանջափեշերի ներքևի մասում 2 թեք գրպաններ՝ շղթայով փակվող, վերևի մասում կափույրով փակվող ուղղանկյուն վրադիր գրպաններ: Ձախ թևքին կարվում է ՀՀ զինանշանով թևքանշանը, թևքի ներքևի մասում մշակվում են ուղղանկյունաձև թեզանիքներ, որոնք կոճկվում են մեկ օղակով և 2 կոճակներով, իսկ աջ թևքին կարվում է ՀՔԾ թևքանշան: Աստառը մետաքսյա, շեղանկյուն մգդակված, 2 ծոցագրպաններով: Ուսադիրների շրջանում երկու փակօղակներ՝ ուսադիրների ամրացման համար (N 12 ձև, նկար 1):Բաճկոնը ուղիղ ուրվագծով է,պատրաստվում է սև գույնի ribstop կտորից, (65% Պ/Ե, 35% բամբակ բաղադրության) կոճկվում է պլաստմասե շղթայով: Բաճկոնի օձիքը կանգուն, որի վրա տեղադրվում է պողպատագույն կարակուլե օձիք: Բաճկոնը ամբողջությամբ մշակված է 195գր/մ^2 խտությամբ սինտիպոնե տաք ներդիրով, իսկ թևքերը 100 գր/մ^2 սինտիպոնե տաք	հատ	79998	239994	3	Վ.Վաղարշյան 13ա	3	

			ներդիրով: Առաջամասը և թիկունքը վերին կտրվածքով, լանջափեշերի ներքևի մասում մշակվում է 2 թեք գրպաններ՝ շղթայով փակվող, վերևի մասում կափույրով փակվող ուղղանկյուն վրադիր գրպաններ, կափույրները կոճկվում են 2.5x2,5սմ չափի կպչուն ժապավենով: Ձախ թևքին կարվում է ՀՔԾ թևքանշան, թևքի ներքևի մասում մշակվում են ուղղանկյունաձև թեզանիքներ, որոնք կոճկվում են մեկ օղակով և 2 կոճակներով: Աստառը մետաքսյա, շեղանկյուն մգդակված, 2 ծոցագրպաններով: Ուսադիրների շրջանում երկու փակօղակներ՝ ուսադիրների ամրացման համար:							
17	18211500/2	բաճկոն	Ձմեռային բաճկոն՝ (երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի համար) սև գույնի կտորից՝ 92% նայլոն, 8% լայկրա, տաք ներդիրով: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական պլաստմասե շղթայով: Բաճկոնին ամրացված է կարգավորվող գլխանոց: Բաճկոնի ձախ լանջափեշի վերին հատվածում կենտրոնական շղթային զուգահեռ 1.5 սմ հեռավորության վրա՝ 16 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպան է, լանջափեշերի երկու կողային հատվածում կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ պլաստմասե շղթայով փակվող գրպաններ են (22 սմ): Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Երկու թևքերին՝ դեպի ներս, ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ են, ձախ թևքի ուսագլխից 90 մմ ներքև ՀՔԾ թևքանշանն է (N 12 ձև, նկար 2): Բաճկոնը առջևից և հետնամասից վերին կտրվածքով, կենտրոնական կոճկվածքը՝ շղթայով, ներքևի փեշը՝ կոճգամով: Բաճկոնի առաջամասի և հետնամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց կտորով երկկողմանի մգդակված 200 գր/մ^2 խտությամբ սինտիպոնով, իսկ թևքերը և գլխանոցը 120 գր/մ^2 խտությամբ սինտիպոնով: Աստառացուն 70 գր/մ^2 խտությամբ մոխրագույն կտորից: Գլխանոցը բաճկոնին ամրանում է շղթայով, գլխանոցի ստորին հատվածում լայնացող վերջավորություններինմշակված են կպչուն ժապավեններ, որոնք կպչում են իրար բաճկոնի կոճկվածքի ուղղությամբ: Բաճկոնի ներքևի փեշի ստորին եզրաշերտի կողային մասերով անցնում են ռետինե էլաստիկ ժապավեններ 3մմ հաստությամբ էլաստիկ	հատ	34998	1364922	39	Վ.Վաղարշյան 13ա	39

			ժապավենները կարգավորվում են պլաստմասե գոտու կարգավորիչներով: Գլխանոցի առջևի եզրաշերտով անցնում է էլաստիկ քուղ՝ ծայրերին պլաստմասե բռնակներ, քուղը յուրաքանչյուր կողմից պետք է ունենա 5-6սմ գլխանոցից դուրս գտնվող հատվածներ: Բաճկոնի կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ լանջափեշերի երկու կողմերում տեղադրվում է 22սմ պլաստմասե շղթայով փակվող գրպաններ, որոնք ներսի ֆլիսե գործվացքով են կարված, շղթայի գլխիկները էլաստիկ քուղով, ծայրերին պլաստմասե բռնակներ: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքնե-րով, էլաստիկ ժապավենով, թևքի լայնությունը կարգավորող 2,5x10 սմ չափսի կպչունակով: Երկու թևքերի վրա դեպի ներս ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ, ձախ թևքի ուսագլխից 90մմ ներքև կարվում է կպչանով ամրացող ՀՔԾ թևքանշան:								

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011474286
ՀՎՀՀ 02589128
Գլխավոր քարտուղարի
պարտականությունների կատարող
Վ.Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան Սարկավագի 157
"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
Տնօրեն
Ա. Ազատյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հա

«14» հոկտեմբերի 2020թ.

ՀԲԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով պայմանա

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
1	18441100/5	գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	180000	180000	180000	180000
2	18441100/6	գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	144000	144000	144000	144000
3	18441100/7	գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	303924	303924	303924	303924
4	18441100/9	գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	5298	5298	5298	5298
9	18231400/3	տաբատներ	0	0	0	0	0	0	0	0	0	480000	480000	480000	480000
10	35811170/2	համազգեստ	0	0	0	0	0	0	0	0	0	1427832	1427832	1427832	1427832
11	35811170/1	համազգեստ	0	0	0	0	0	0	0	0	0	1679832	1679832	1679832	1679832
12	18231200/2	կիսաշրջազգեստներ	0	0	0	0	0	0	0	0	0	18000	18000	18000	18000
14	18341100/1	շապիկ	0	0	0	0	0	0	0	0	0	293832	293832	293832	293832
16	18211500/1	բաճկոն	0	0	0	0	0	0	0	0	0	239994	239994	239994	239994
17	18211500/2	բաճկոն	0	0	0	0	0	0	0	0	0	1364922	1364922	1364922	1364922

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011474286
ՀՎՀՀ 02589128
Գլխավոր քարտուղարի պարտականությունների
կատարող Վ.Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան Սարկավագի 157
"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
Տնօրեն
Ա.Ազատյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«14» հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«14» հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն